29. ՔԱՋԱԼ ԱԽՊԵՐԸ

Ընում ա, չի ընում մին թաքավեր։ Տրան ընում ա մին կնեգյ, էրկու տղա։ Տղոցան պուճուրը քաչալ ա ընում։ Էտ կնեգյը շուտ մեռնում ա։ Թաքավերն օղում ա մին թաղա կնեգյ օղի։ Ման ա կյամ տես-տեն, քյինամ ա պտահում մին քյասիր կնգա։ Ընդրան էլ ընում ա մին քաչալ տղա։ Էտ կնեգյը շատ սիրուն ա ընում, ղաշանգյ, նախշուն։ Թաքավերը տրան յոր ա օնում, տանում ուրան պալատը։

Մին քանե տըրնանը ետը էտ կնեգյն էլ ա մեռնում։ Թաքավերը դարդ ա անում, թա խե՞ ինքյը էտքան քյամրախտ ա՞։ Ետնան ինքյն էլ տ հիվանդանում։

Մոնելիս տա կանչում ա ուրան էրկու տղոցը ասըմ.— Էս քաչալը հինչպես իմ կնդանս մեխկը, լավ կպահիքյ, վեր տըեսնաք նըհետնիտ ըրրշում չի, մին պեն կտաք, ուրան համար քյինա, ապրի։

Թաքավերին մոնելան ետը էտ տղերքյը սկսում ըն կարտի տալ։ Քաչալը տոնը յալա յա տանում, հեյվանը, նախիրը, տոն-տեղ պահում։

Քաչալը վեր տըեսնում ա տահանք տոնը քանդում ըն, մին դոնում կյամ ա տահանց ասըմ.— Բա տըեսնում չը՞ք, վար խալխը մին ղոլան ըն ծեր տոնը թըլանում, տուք էլ մին ղոլան։ Հի՞նչ ըք անում, կարտի տալս վե՞րն ա, փլան-փեշմաքյանս վե՞րն ա, այ աննամուսնի՞, ծեր հոր օշաղը խե՞ քանդում ը՞ք, այ ծեր անըմը կտրվի՞։

Էս մեծ ախպերը ասում ա. — Պա՛հ, տո՛ւ իր մնացալ, ա՛ քաչալ, վեր մըեզ պենըկլխու տինիս, տո՛ւս եկ, կորե մեր տանան։

Էս կուճուր ախպերը ետ ա տըեռնում, ասում.— Չէ, մեր հաՙրը ըտրան թափշուր ա ըրալ մըեզ, թող կենա։

Քաչալը քյնում ա ուրան կործին, տահանք էլ ուրանց կարտի տալին։

Քաչալին հովսալան կտրում ա, կյամ ա ասում.— Ա՛յ ախպերք, իմ փայըս տվեքյ, յըես քյինամ ըմ։

Կուճուր ախպերը հիշելավ ուրան հորը խոսկը, եր ա կենում, մին կյեվաթ վըեսկե տալիս ըտրան, ասում.— Դե, պարի ճընապար, տերը քյըեզ նհետ։

Մհեկ քաչալին թողինքյ ճընապարին, տըեսնանք հի՞նչ տեռեն էն էրկու ախպերքյը։

Էն էրկու ախպերքյը ըտի հաղ անելավ, ըտրանց տոնը, տեղը, իլաՙծ-չիլաՙծը փըչանում ա։

Տահանք ասում ըն.— Էս տոնը մըեզ կյաՙլիս չի, էս քաղաքը մըեզ կյաՙլիս չի, մըեր կծեգյը ետ ա տվալ, եք հինչ վեր օնինքյ ծախինքյ, կլոՙխ յոր օնինքյ, քյինինքյ էս քաղաքաս։

Տրանք ճընապար ըն ընգնում։ Տահանց էլ թողինք հղըցումը։ Մհեկ քաչալ ախպորն անա խաՙրաՙր տանք։ Քաչալ ախպերը քյինում ա մին քաղաք, վերը վեր չորս ղոլավը պատած ար, էրկու տոՙռն օներ, մինը՝ մաչը նի մննելի, մինն էլ տոՙւս կյալի։ Էտ նի մննելիք տռանը քշտին շինած ար էրկու ատաժանի մին տոն։ Էտ տանն էլ ապրում ար մին նախշուն հարթնը, կլխեն վըեսկե փուլ տրաՙծ, հայավարի, իրեք փեշկանի, շոլկում-շափաղում։ Մհեկ տեսնանք էտ հարթնը հի՞նչ աՙդաՙթի, հի՞նչ մաՙսաՙմրի զատ ա, հի՞նչ ա անում[1]։

Էտ հարթնը միշտ ուրան կոՙլը կկոկե, տոՙւս կկյա ըալկոնը, կկաղնի, զարիր մարթկանց կկանչի, տանի քյեփավ անի, թըլանի, պեց թողնի։ Իտիյութոՙնավ ժողովուրթին նա շատ վնաս կտա։ Ինքյն էլ շատ հարուստ կապրի։

Քաղաքին տոՙւս կյաՙլի տռանը քշտին ապրում ար մին հարուստ առուտուրական։

---

[1] Սրան հաչորդում է հետևյալ հատվածը.

«Էտ ղաթըմը ծրծաղեցին հաՙքյաՙթ լըսողնեն։ Ասողը թաՙ.

— Դե լաՙվ անշուկ կալիքյ, ճվարանի տակա գյիլաՙս չի վեր տեռնում, խոսկ ա, ղարափաթ չի։ (Բանասացի հավելումն է։ Ծ. Կ.)

Մհենդյ նաղլ անիմ էտ առուտուրականին կադարած պենեբան, թա էտ հարուստն հի՞նչ պենի յա ինում, վեր ըտի հարուստ ա։ Էտ առուտուրականին ամմեն տեսակի հեյվաննի յա ինում, ամմեն տեսակ թանդյանոց, իժընանոց ճոթը-կտորնի՞, չիթե՞ր, կնգա զարթարա՞նք... Վեր էտ զարթարանքը մուշտարուն նհաշ ա տալի, էն տեսակ իժան կյին ա ասում, վար մուշտարին մնում ա մաթ մնացած, ետնան էլ մաթ մնալան առնում ա։

Վաճառականը էտ առնողներին տանում ա դուքյանին քամակը, յա թըլանում, յա թա չէ, նահանց սաղ պեց չի թողում, սպանում ա։

Մհենդյ նաղլ անինքյ էտ էրկու ախպորը անա, թա տահանք հո՞ր քյնացին։ Տահանք ման կյալավ, եկին հըսին էտ քաղաքը։ Հղրցավը խլրջկոտելավ քյինում ըն, ամմեղ տրեղը, տեսնում մին լավ, նախշուն հարթնը մին պալկոնում կաղնած, ուրանց կանչում ա. — Ա՛յ ջահիլ տրղերքյ, հի՞նչ ըք օղում, հենց ըք խամ ընիքյ։ Նղացած կինիքյ, եկեքյ մին ստաքան չայ խմեցեքյ, քյնացեքյ։

Տղերքը ասում ըն.— Ա՛ քուր, շատ ընք նղացած, շատ ապրիս։

Տահանք խուրջիններին տինում ըն մղակումը, ուրանք նի մննում տոն, նստում։ Մին ստաքան քախծր չայ ըն խմում։ Էտ կնեդյը էրկունջի դունումը չային մաչը քընըցնող տեղ ա քըցում, տամ տրանց։ Տրանք խմում ըն, քոն ինում, դե էտ հարթնը գյուգում ա քանի սհաթանը ետը բիդի ղարթնին։

Նա վախտից շուտ ղուրթընըցնում ա տահանց, ասում.— Դեհա, եր կացեքյ, հես ա մարթս կկյա՞ կդյիդա՞ թա օրիշ պենի յրք եկալ։

Հա, մուռացե ասիմ, վեր հիբը նահանք քոն իլան, էտ հարթնը նահանց խուրջիններան վրեսկեն թափից, տեղը պենձիկի կտորտանք ածից։

Էտ տղերքը սրտաճաք իլած վեր կացին, խուրջիններին եր կալին, քյինացին։

Հղրցումը կուճուր ախպերը մեծին ասից.— Ա՛յ ախպեր, ախեր խուրջինը թիթվացալ ա։

Էտ մըեծն էլ ասից.— Ա՛յ ախպեր, քոն ընք իլա՞լ, կերա՞լ ընք, դինջացա՞լ ընք, ըտրա մհար էլ թիթև ա ըրվամ, էս ա վեր մին խրեդյ քյնանք, կծընդրրանա՞։

Ըտրանք քյնացին։ Կուճուրը հովսալա չըրավ, խուրջիններին, պեց ըրավ, տեսավ լոխ պենձիկնի յա, խուտուրու-մուտուրու պաներ ա։ Էտ տղերքը տեռին թափառականնի։

Քաչալը լսից, վեր թաքավերին տղերքյը կլոխ ըն եր կալալ, կորալ։ Էտ վախտը քաչալը ուրան խելունքոթունավը տեռնում ա

Թաքավեր։ Թաքավերեն տղերքը թափուրդա տրեռած կյալիս ըն էտ թաքավերեն տանը ծառա նի մննում, չգյիդալով, վեր թաքավերն էլ ուրանց քաչալ ախպերն ա, ամմա քաչալը տահանց ճնանչում ա, ամեգը մին պաշտոն ա տամ, պալատումը ապրում ըն, ուրանք չգյիդալով, թա հու վա էտ թաքավերը։

Մին օր թաքավերը փսակվում ա հըրևան քաղաքին թաքավերին ըխճրկանը նհետ։ Ինքը հըրսանեքյին վախտը նաղլ ա անում կլխավը եկածը։ Իտի նահանք ճնանչում ըն ուրուր։ Քաչալը տահանց լավ պաշտոննի յա տամ, փըսակում, տընատար-խուխատար շինում։

Երգյիքան իրեք խնձոր վեր ընդնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ կյրողին։